ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Funded by the European Union

ՎԶԵԲ-ի խորհրդատվական ծրագիր փոքր բիզնեսի համար – Team Europe Արևելյան գործընկերության նախաձեռնության շրջանակում

Իրականացման ժամանակահատված: 15.12.2020 - 14.06.2026

ԱԼԳ երկրներ:

Ադրբեջան, Բելառուս, Հայաստան, Մոլդովա, Ուկրաինա, Վրաստան

ԵՄ ներդրում: € 19 976 000

Ընդհանուր բյուջե: € 19 976 000

Իրականացնող կազմակերպություն(ներ):

EBRD

Նախագծի կայքէջ: eu4business.eu/projects/ebrd-advice-for-small-businesses-team-europe-eap-window/

Նախագծի նկարագրություն:

Ծրագիրը նպատակ ունի աջակցել փոքր և միջին ձեռնարկություններին (ՓՄՁ) հաղթահարելու և վերականգնվելու Covid-19 համավարակի տնտեսական հետևանքներից Հայաստանում, Ադրբեջանում, Բելառուսում, Վրաստանում, Մոլդովայում և Ուկրաինայում, ինչպես նաև օգնել նրանց հարմարվել թվային տնտեսության պայմաններին:
Ծրագիրը շարունակում է նաև իր հիմնական նպատակները՝ բարելավել ՓՄՁ-ների ֆինանսավորման հասանելիությունը և աջակցել Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտու (DCFTA) իրականացմանը Վրաստանում, Մոլդովայում և Ուկրաինայում: Միևնույն ժամանակ նախաձեռնությունը կհամալրի և կզարգացնի ԵՄ կողմից ֆինանսավորվող գործող և նախատեսվող բիզնես խորհրդատվական ծրագրերը, հատկապես Հայաստանում, Բելառուսում, Վրաստանում և Ուկրաինայում:

Ակնկալվող արդյունքներ:

1. Աջակցել ՓՄՁ-ներին ֆինանսավորման և մասնագիտական գիտելիքների հասանելիություն ստանալու հարցում տնտեսական ճգնաժամերի պայմաններում, զարգացնել նրանց թվային պատրաստվածությունն ու դիմակայունությունը՝ մրցունակությունը բարձրացնելու համար, ինչպես նաև աջակցել DCFTA-ի իրականացմանը մասնավոր հատվածում:
2. Ուղղակի աջակցություն տրամադրել մասնավոր հատվածին՝ ընկերությունների մակարդակում, ինչպես նաև իրականացնել շուկայի զարգացման և կարողությունների ամրապնդման միջոցառումներ, օրինակ՝ ՓՄՁ-ների համար վերապատրաստումներ և շուկայական տնտեսության լավագույն փորձի տարածում:
3. Զարգացնել կայուն և արդյունավետ բիզնես խորհրդատվական ծառայությունների ցանց Հայաստանում, Ադրբեջանում, Բելառուսում, Վրաստանում, Մոլդովայում և Ուկրաինայում: